ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՏԴ 631.1
DOI: 10.56246/18294480-2024.16-217

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ
ԳՊՀ դասախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ hkhachatr@mail.ru
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԻՆԱ
ՀԱԱՀ դասախոս
էլփոստ՝ ninavardanyan@mail.ru

Ցանկացած երկրի պարենային անվտանգության ամենակարևոր բաղադրիչը պարենի առկայությունն է, որը իր հերթին բնորոշում է տվյալ երկրում պարենի ֆիզիկական առկայությունը և մատչելիությունը արտադրության, պահուստների ստեղծման կամ արտահանումների և ներկրումների միջոցով:

Վերլուծության նպատակն է պարզաբանել սննդամթերքի հիմնական տեսակներով բնակչության ինքնաբավության մակարդակը և առաջարկել «հացի խնդրի» լուծման մատչելի և հնարավոր ուղիներ: Որոշ ապրանքների ինքնաբավության ցածր մակարդակը վկայում է հիմնական պարենային ապրանքների ներմուծումը տեղական արտադրությամբ որոշակի ողջամիտ սահմաններում փոխարինելու կարևորության մասին, ինչին կարելի է հասնել տեղական արտադրության արտադրանքի որակի և մրցունակության բարելավման, ինչպես նաև արտադրության մեծացման միջոցով: Չնայած երկրի շուկայում պարենի ֆիզիկական մատչելիությունը խնդրահարույց չէ, բայց առանձին մթերքների տեսականու բազմազանությունը խիստ սահմանափակ է, իսկ առավել կարևոր մի շարք սննդամթերքների (ցորենի, հատիկաընդեղենի, շաքարի, յուղի և այլն) ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է:

Հայաստանը, կալորիականությամբ հաշվարկած, բնակչության պարենի պահանջարկը սեփական արտադրությամբ բավարարում է ընդամենը 55–60%-ով: Հաշվի առնելով երկրում տիրող պատերազմական իրավիճակը և տնտեսությունում ոչ շահեկան զարգացումները, անհրաժեշտ է մշակել և իրականացնել պարենային անվտանգությանը միտված արդյունավետ ագրարային քաղաքականություն:

Բանալի բառեր՝ *ինքնաբավություն, պարենամթերք, սպառում, պաշարներ, արտահանում, ներմուծում, արտադրություն, վարելահող, արտադրողականություն:*

Ինքնաբավության աստիճանը ավելի շուտ արտադրության բնութագրիչն է, քան սպառման, քանի որ ներկայացնում է սոսկ պարենի արտադրության տեսակարար կշիռը երկրում սպառված պարենամթերքի ծավալի կառուցվածքում: Ինքնաբավությունը տեսականորեն ենթադրում է պարենամթերքի նորմատիվային պարենային զամբյուղով պահանջվող քանակության և արտադրված պարենամթերքի ծավալների հարաբերակցություն: ՀՀ պարենամթերքի հիմնական տեսակների գծով ինքնաբավության մակարդակները վերջին 2010-2021 թվականների կտրվածքով ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1:

Ինքնաբավության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում[1]:

		2011	2016	2017	2018	2019	2020	2021
Ցորեն	**Ինքնաբավության աստիճան, %**	36,5	53,2	33,2	31,5	25,9	24,4	23,2
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	17,4	21,2	12,3	11,5	11,6	9,1	-0,4
Կարտոֆիլ	**Ինքնաբավության աստիճան, %**	100,9	101,3	102,6	102,6	101,1	101,1	111,7
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	-19,4	-22	-23,7	-23,9	-22,7	-26,5	-25,5
Բանջարեղեն	**Ինքնաբավության աստիճան, %**	98,2	103,3	102,5	104,7	102,4	103,9	105,6
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	106,1	115,8	101,6	88,6	79,7	86	79
Միրգ	**Ինքնաբավության աստիճան, %**	90	98,1	109,7	108,9	104	98,2	114,4
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	4,3	24,7	29,6	30,1	24,3	21,5	19,3

[1]https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf , Հավելված 2, էջ 8

Ձու	**Ինքնաբավության աստիճան, %**	94,1	99,4	98,2	99,5	100	100,3	98,8
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	2,7	3,7	4	4,6	4,5	5	4,3
Կաթ	**Ինքնաբավության աստիճան, %**	82,9	88,6	91,2	86,8	84,3	82	87,7
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	143	176,4	169	168,2	163,7	165	154
Տավարի միս	**Ինքնաբավության աստիճան, %**	78,4	92,5	91,5	89,2	90,4	87,3	92,2
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	-18,1	-10,6	-9,1	-9,2	-9,7	-8,6	-9,8
Ձուկ	**Ինքնաբավության աստիճան, %**	87,2	108,6	101,8	109	113,1	148,4	143,7
	1 շնչի հաշվով տարեկան սպառման շեղումները նորմայից	-8,2	-4,8	-5,4	-5,8	-5,7	-6,6	-6,4

Ինչպես ցույց են տալիս տվյալները, մի շարք առաջին անհրաժեշտության պարենամթերքների ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է, մասնավորապես ցորենի գծով 2011 թվականին այն կազմել է 36,5 տոկոս, իսկ 2021 թվականին՝ ընդամենը 23,2 տոկոս: 1 շնչի հաշվով ցորենի սպառումը տարեկան 2010-2021 թվականների ընթացքում տատանվել է 129,6-153,4 կգ-ի սահմաններում, մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաշ-վարկված և մշակված սննդամթերքի սպառման նորման տարեկան կազմում է 130 կգ: Փաստացի դուրս է գալիս, որ մինչև 2020 թվականը ՀՀ-ում ցորենի տարեկան սպառումը 1 շնչի հաշվով գերազանցում է նորման և միայն 2021 թվականին է, որ նորմայից ցածր է 400 գրամով: Կարտոֆիլի գծով ինքնաբավության մակարդակը բարձր է, մյուս կողմից սպառման ցուցանիշը ունի նվազման միտում, ընդ որում ՀՀ-ում տարեկան 1 շնչի հաշվով ավելի քիչ կարտոֆիլ է սպառվում, քան նախատեսված է ԱՆ-ի կողմից: Բանջարեղենի գծով ինքնաբավությունը բարձր է, ընդ որում ՀՀ բնակչությունը 1 շնչի հաշվով տարեկան սպառում է ավելի շատ, քան նախատեսված է նորմայով: Մրգի գծով ինքնաբավության ցուցանիշը անկում է գրանցել, դրան զուգահեռ իջել է նաև բնակչության կողմից տարեկան 1 շնչի հաշվով մրգի սպառումը, չնայած, որ այս դեպքում ևս սպառումը գերազանցում է

նորմայով նախատեսվածին: Ցածր է նաև կաթի, տավարի մսի, ձկան և ձվի ինքնաբավության մակարդակները: Վերջիններս վկայում են առաջին անհրաժեշտության պարենամթերքների ներմուծումը որոշակի հիմնավորված սահմաններում տեղական արտադրությամբ փոխարինելու կարևորության մասին, ինչին կարելի է հասնել տեղական արտադրության մթերքների որակի ու մրցունակության բարձրացման, ինչպես նաև արտադրության ծավալների ավելացման միջոցով:

Պարենային հաշվեկշռի ամբողջական առաջարկի կարևոր բաղադրամասերը պարենի տեղական արտադրության և ներմուծման ցուցանիշներն են: Վերջիններիս և տարեսկզբի պահուստի հանրագումարով ձևավորվում է տվյալ պարենամթերքի ամբողջական առաջարկը, որը հիմք է սպառումը հավասարակշռելու և ինքնաբավության մակարդակը հաշվարկելու համար: ՀՀ ԱՎԿ-ի կողմից այդ ամբողջական առաջարկը բաշխվում է երկրի ներսում՝ սննդի, սերմացուի, անասնակերի նպատակով սպառման, կորուստների հաշվարկման և տարեվերջի պահուստների ձևավորման համար: Հատկանշական է, որ 2011 թվականին ցորենի տարեկան սպառումը 1 շնչի հաշվով կազմել է 147,4 կգ, ամսականը կլինի՝ 147,4:12=12,28 կգ: Պահուստային ֆոնդը նախատեսված է եղել 51,33 տոննա: Նշենք, որ վերջինս նախատեսվում է հունվարից մինչև հունիս բնակչության պարենային սպառումը ապահովելու և սերմացուի պահանջը բավարարելու համար: Մեր հաշվարկներում 6 ամսվա համար 3021,4 հազար բնակիչ ունեցող երկրի ցորենի սպառումը կկազմի 3021,4*12,28*6=222616,7 հազար կգ կամ 222,6 հազար տոննա: 19,5 հազար տոննա նախատեսվել է որպես սերմացու՝ 222,6+19,5=242,1 հազար տոննա, դրան գումարած 15 տոկոս ապահովագրական ֆոնդը, կստացվի 242,1+242,1*0.15=278,4 հազար տոննա: Այսինքն՝ մեր հաշվարկներով պահուստային ֆոնդը պետք է կազմեր 278,4 հազար տոննա, մինչդեռ պաշտոնական տվյալներով այն կազմում է 155,1 հազար տոննա, այսինքն՝ գրեթե 2 անգամ (1.8 անգամ)պակաս, քան պահանջվում է: Մյուս կողմից 2011 թվականին 1 շնչի հաշվով փաստացի սպառումը օրական կազմել է 403,8 գրամ՝ ապահովելով օրական 1144,9 կկալ, մինչդեռ ըստ ՀՀ ԱՆ կողմից մշակված նորմաների ամբողջ հացամթերքի օրական սպառման նորման 1 շնչի հաշվով կազմում է 355 գրամ: Փաստացիորեն սպառումը նույն աղբյուրի տվյալներով բժշկական նորման գերազանցում է 1,14 անգամ: Այս անճշտության հետևանքով, ինչ խոսք, խախտվում է նաև սննդաբաժնի կառուցվածքը:

2021 թվականին ցորենի տարեկան սպառումը 1 շնչի հաշվով կազմել է 129,6 կգ, ամսականը կլինի 129,6:12=10,8 կգ: Պահուստային ֆոնդը 1 շնչի համար նախատես-ված է եղել 122,81 տոննա: Մեր հաշվարկներում 6 ամսվա համար 2961,4 հազար բնակիչ ունեցող երկրի համար ցորենի սպառումը կկազմի

2961,4*10,8*6=191898,7 հազար կգ կամ 191,9 հազար տոննա: 17,6 հազար տոննա նախատեսվել է որպես սերմացու, դրան գումարած 15 տոկոս ապահովագրական ֆոնդը՝ կստացվի 191,9+17,6=209,5 հազար տոննա, 209,5+209,5*0.15=240,9 հազար տոննա: Այսինքն՝ մեր հաշվարկներով պահուստային ֆոնդը պետք է կազմեր 240,9 հազար տոննա, մինչդեռ պաշտոնական տվյալներով այն կազմում է 363,7 հազար տոննա, այս դեպքում 122,8 հազար տոննայով ավելի է, քան պահանջվում էր: 2021 թվականին 1 շնչի հաշվով փաստացի սպառումը օրական կազմել է մոտավորապես 355 գրամ՝ ապահովելով օրական 1000,5 կկալ, ինչը համընկնում է ՀՀ ԱՆ կողմից մշակված նորմաներին: Մյուս կողմից ցորենը առաջին անհրաժեշտության ապրանք է, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմական իրավիճակում ենք գտնվում, այդ շեղումները կարելի է համարել նորմալ:

Քննարկենք մեկ այլ պարենամթերքի հարցը, որի ինքնաբավության մակարդակը բավականին ցածր է, և պակասը լրացվում է ներմուծմամբ: Տեղական արտադրության հաշվին այստեղ տավարի մսի պահանջարկը 2021 թվականին բավարարվել է միջինը 92,2%-ով 2011 թվականի 78,4%-ի փոխարեն: Ըստ պարենային հաշվեկշռի՝ տարեկան միջին հաշվով ներմուծվել է 6,5 հազ. տոննա (2021 թվական) տավարի միս: 2021 թվականին տավարի մսի տարեկան սպառումը 1 շնչի հաշվով կազմել է 26,7կգ, ամսականը կլինի՝ 26,7/12=2,225 կգ: Պահուստային ֆոնդը 1 շնչի համար նախատեսված է եղել 0,14 տոննա: Մեր հաշվարկներում 6 ամսվա համար 2961,4 հազար բնակիչ ունեցող երկրի համար տավարի մսի սպառումը կկազմի 45,465 հազար տոննա, մինչդեռ պաշտոնական տվյալներով այն կազմում է 0,40 հազար տոննա: 2021 թվականին 1 շնչի հաշվով փաստացի սպառումը օրական կազմել է մոտավորապես 73,3 գրամ՝ ապահովելով օրական 131,9 կկալ, ինչը 71,1 կկալ-ով պակաս է ՀՀ ԱՆ կողմից մշակված նորմայից:

Պարենամթերքի հիմնական տեսակների արտահանման և ներմուծման ծավալների համադրումից տեսնում ենք, որ միայն ցորենի գծով է, որ ներմուծման ծավալները գերազանցում են արտահանման ծավալներին, մյուս մթերքների գծով հիմնականում արտահանվում են և ուսումնասիրվող միայն 2011 թվականին է որ մյուս արտադրանքների գծով ներմուծումը գերազանցում է արտահանմանը (գծապատկեր 1): Հաշվի առնելով դինամիկան՝ կարելի է ասել, որ տվյալները բավականին խոստումնալից են, չնայած երկրում տիրող ռազմական լարվածության: Մյուս կողմից տվյալների վերլուծության ժամանակ պետք է փաստենք՝ ՀՀ ԱՎԿ-ի կողմից ներկայացված պաշտոնական տվյալներում հաշվի չի առնվում այն փաստը, որ այդ ծավալի մի մասը սպառվում է ԼՂՀ-ում:



Գծապատկեր 1. Պարենամթերքների արտահանման և ներմուծման հավելաճի միջին տեմպերը, 2011-2021թթ[1]:

Համաձայն վիճակագրական պաշտոնական տվյալների՝ 2011 թվականին 3776,4 մլրդ դրամ կազմող ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կազմել է 767,88 մլրդ դրամ, իսկ 2021 թվականին 6982,96 մլրդ դրամի մեջ՝ 791,69 մլրդ.դրամ: Փաստացի 10 տարվա ընթացքում միջին հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը ավելացել է ընդամենը 0,3 %-ով, մյուս կողմից կրճատվել է նաև ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսական արտադրության մասը միջին հաշվով 5,7%-ային կետով (գծապատկեր 2):

Բնակչության մեկ շնչի հաշվով վարելահողերի տարածությունը 2011 թվականին կազմել է 0.149 հա և 2021 թվականին՝ 0.15 հա, այդ թվում՝ ցանքատարածության չափը համապատասխանաբար՝ 0,09 և 0.08 հա: Ըստ հողային հաշվեկշռի՝ Հայաստանի վարելահողերը մոտ 443.4 հազար հա են և կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 21,7%-ը: Վարելահողի և ցանքատարածությունների չափերը ըստ տարիների փոփոխվել են՝ աղյուսակ 2:

[1]https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__7%20Food%20Security/FS-1-2021.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 2.Գյուղատնտեսության հիմնական ցուցանիշների դինամիկան,%:

Աղյուսակ 2.

ՀՀ վարելահողերի չափը և դրանց նպատակային օգտագործումը:

Ցուցանիշներ	2011	2016	2018	2019	2020	2021
Ընդամենը վարելահող, 1000 հա	449.2	446.4	445.6	444.8	444	443.4
Հավելաճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %	x	-0.1%	-0.1%	-0.2%	-0.2%	-0.1%
Վարելահողի կառուցվածքը գյուղ. նշանակության հողերում, %	21.6	21.8	21.8	21.8	21.8	21.7
Ընդամենը ցանքատարածություն, 1000 հա	286.7	353.4	242.3	227.9	222.7	227.2
Հավելաճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %	x	4.3%	-17%	-5.9%	-2.3%	2.0%
Վարելահողի նպատակային օգտագործման մակարդակը, %	64%	79%	54%	51%	50%	51%
Ցանքից դուրս մնացած վարելահողի չափը, 1000 հա	162.5	93	203.3	216.9	221.3	216.2
Հավելաճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %	x	-11%	47.9%	6.7%	2.0%	-2.3%

Գնահատելով վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, պարզել ենք, որ ուսումասիրվող ժամանակահատվածում ցուցանիշը ունի նվազման միտում և 2021 թվականին 2011 թվականի համեմատ ցանքից դուրս

մնացած վարելահողերի չափը ավելացել է մոտ 33%-ով: 2021 թվականին նպատակային է օգտագործվել վարելահողերի մոտ 51 տոկոսը 2011 թվականի 64 տոկոսի դիմաց: 2021 թվականին ցանքից դուրս է մնացել 216.2 հազար հա վարելահող /վարելահողերի 49%-ը/: Հատկանշական է, որ վարելահողի ցածր օգտագործման արդյունավետությունը մասամբ պայմանավորված նրանով, որ գյուղական համայնքների տնօրինության տակ գտնվող վարելահողը հիմնականում օգտագործվում է վարձակալության նպատակով, և շատ դեպքերում այն մնում է խամ ու խոպան: Այս առումով անհրաժեշտ է ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող և տարիներ շարունակ չօգտագործվող վարելահողերը ներգրավել գյուղատնտեսական շրջանառության մեջ՝ առանց դրանց սեփականատերերի սեփականության իրավունքը խախտելու և վնաս պատճառելու:

Յուրաքանչյուր երկրի համար բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկը ամենաուղղակի իմաստով հացի խնդրի լուծումն է: Հաշվի առնելով ցորենի ինքնաբավության ցածր մակարդակը և ցորենի պարենային ապահովության միջազգային ճգնաժամը, ինչպես նաև տարածաշրջանային լարված պատերազմական իրավիճակը՝ փորձել ենք հասկանալ՝ ինչպես կարելի է ցորենի ինքնաբավությունն ապահովել սեփական ռեսուրսների հաշվին: Ցորենի ցանքատարածությունները կազմել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության մոտ 47 տոկոսը /2021 թվականին/ և տարեցտարի կրճատվել են, մասնավորապես 2011 թվականի համեմատ կրճատվել են 24 տոկոսով՝ (աղյուսակ 3): ՈՒսումնասիրվող ժամանակաշրջանում ցորենի մշակության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 2016 թվականին:

Աղյուսակ 3.

ՀՀ-ում ցորենի մշակության հիմնական ցուցանիշները 2011-2021թթ.:

	2011	**2016**	**2018**	**2019**	**2020**	**2021**
Ցանքատարածությունը, 1000 հա	77.8	108.7	66.7	59.9	59.4	59.1
Հավելաճի տեմպը, %		40%	-39%	-10%	-1%	-1%
բերքատվության մակարդակը, g/հա	28.8	32.4	28.2	19.6	22.5	16.8
Հավելաճի տեմպը, %		13%	-13%	-30%	15%	-25%

Ըստ պարենային հաշվեկշռի տվյալների՝ ցորենի արտադրությունը 2021 թվականին կազմել է 363.7 հազար տոննա, որը կազմել է ամբողջական առաջարկի 45,9 տոկոսը, իսկ 330,4 հազար տոննան ներմուծվել է: Սպառման ընդհանուր ծավալից 362,5 հազար տոննան օգտագործվել է սննդի մեջ, 91,2 հազար տոննան՝ որպես անասնակեր, 17,6 հազար տոննան նախատեսվել է որպես սերմացու, իսկ մնացած 39,8 հազար տոննան կազմել են կորուստները: Հատկանշական է, որ ցորենի պահուստային ֆոնդը մեր հաշվարկներով պետք է կազմեր 240,9 հազար տոննա: Վերլուծելով 2006-2021 թվականների տվյալները, պարզել ենք, որ հացահատիկային մշակաբուսերի ցանքատարածության 1 հա-ով ավելացման արդյունքում ինքնաբավության մակարդակը կավելանա 0,24%-ով: Մյուս կողմից 59,1 հազար հա ցանքատարածության պայմաններում անհրաժեշտ ծավալի ցորեն ապահովելու համար ցորենի բերքատվությունը 1 հա-ի հաշվով պետք է կազմի 40,7g/հա /240900:59100*10/՝ 2,4 անգամ ավելի բարձր բերքատվություն քան ապահովել ենք 2021 թվականին:

Առաջարկություններ՝

- Պարենային հաշվեկշռում պահուստային ֆոնդերի հաշվարկման ժամանակ անճշտություններից կրկնակի հաշվարկներից խոսափելու նպատակով մշակել ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար միասնական հաշվեկշիռներ և իրականացնել պարենային հաշվեկշիռների համադրում:
- Ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող և տարիներ շարունակ չօգտագործվող վարելահողերը ներգրավել գյուղատնտեսական շրջանառության մեջ՝ առանց դրանց սեփականատերերի սեփականության իրավունքը խախտելու և վնաս պատճառելու, բարձրացնել մշակաբույսերի բերքատվության մակարդակը:
- Կատարելագործել արտադրանքների իրացման շուկայական պահանջները, որը պետք է նպաստի գյուղացիական տնտեսությունների շահագրգռվածության բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2012-2022:
2. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքախմբերի/ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

ISSUES OF SELF-SUFFICIENCY OF MAIN TYPES OF FOOD IN ARMENIA

KHACHATRYAN HAKOB
PhD in Economics, Associate Professor
GSU Lecturer
e-mail: hkhachatr@mail.ru
VARDANYAN NINA
ANAU Lecturer
e-mail: ninavardanyan@mail.ru

The most important component of any country's food security is the availability of food, which, in turn, determines the physical availability of food in a given country through production, stockpiling or export and import.

The purpose of the analysis is to clarify the level of self-sufficiency of the population with the main types of food and to offer affordable and possible solutions to the "bread problem". The low level of self-sufficiency in some products indicates the importance of replacing imports of basic food products with local production within certain reasonable limits, which can be achieved by improving the quality and competitiveness of locally produced products, as well as by increasing production.

Although the physical availability of food in the country's market is not a problem, the variety of individual foodstuffs is very limited, and the level of self-sufficiency in some of the most important foodstuffs is still low. In terms of calories, Armenia satisfies the population's need for food through its own production by only 55-60%. Given the military situation and adverse events in the country, it is necessary to develop and implement an effective agricultural policy aimed at ensuring food security.

Keywords: *self-sufficiency, food, consumption, stocks, export, import, production, arable land, productivity.*

ВОПРОСЫ САМООБЕСПЕЧЕНИЯ ОСНОВНЫМИ ВИДАМИ ПРОДОВОЛЬСТВИЯ В АРМЕНИИ

ХАЧАТРЯН АКОБ
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ
Электронная почта: hkhachatr@mail.ru
ВАРДАНЯН НИНА
Преподаватель НАУА
Электронная почта: ninavardanyan@mail.ru

Наиболее важным компонентом продовольственной безопасности любой страны является наличие продовольствия, которое, в свою очередь, определяет физическую доступность и доступность продовольствия в данной стране за счет производства, накопления запасов или экспорта и импорта.

Цель анализа - уточнить уровень самообеспеченности населения основными видами продуктов питания и предложить доступные и возможные пути решения «хлебной проблемы». Низкий уровень самообеспеченности отдельными продуктами свидетельствует о важности замещения импорта основных продуктов питания местным производством в определенных разумных пределах, что может быть достигнуто за счет повышения качества и конкурентоспособности продукции местного производства, а также за счет увеличения производства.

Хотя физическая доступность продуктов питания на рынке страны не является проблемой, разнообразие отдельных продуктов питания очень ограничено, а уровень самообеспеченности некоторыми наиболее важными продуктами питания по-прежнему низкий. В пересчете на калории Армения удовлетворяет потребность населения в продуктах питания за счет собственного производства лишь на 55-60%. Учитывая военную обстановку и неблагоприятные события в стране, необходимо разработать и проводить эффективную аграрную политику, направленную на обеспечение продовольственной безопасности.

Ключевые слова: *самообеспечение, продовольствие, потребление, запасы, экспорт, импорт, производство, пашня, урожайность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.06.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: